ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի հուլիսի 02-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ՔՀ-ԳՀԱՇՁԲ-26/03

Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար՝ Քաջարան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՀ-ԳՀԱՇՁԲ-26/03 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 01.07.2026թ.-ին ստացված հարցադրման և դրա վերաբերյալ տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում 1.

Հրավերով նշված է, որ պահանջվող շինարարական տեխնիկան ներկայացված է սույն հրավերին կից աշխատանքային նախագծում, բայց չկա, չենք գտնում

խնդրում ենք նշել կոնկրետ ինչ շինարարական տեխնիկա է անհրաժեշտ ներկայացնել

Պարզաբանում 1.

Հարգելի՛ մասնակից,

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ շինարարական տեխնիկայի վերաբերյալ առանձին ցանկ աշխատանքային նախագծում նախատեսված չէ:

Պահանջվող շինարարական տեխնիկան ներառված է կից նախահաշվային հաշվարկներում՝ համապատասխան աշխատանքների կատարման համար կիրառվող մեքենաների և մեխանիզմների տեսքով, որոնց համար հաշվարկված են շահագործման ծախսերը՝ համաձայն գործող նախահաշվային նորմերի: Հետևաբար, մասնակիցը պետք է ներկայացնի այն շինարարական տեխնիկան (կամ դրա օգտագործման իրավունքը հավաստող համապատասխան փաստաթղթերը), որն անհրաժեշտ է նախահաշվային հաշվարկներով նախատեսված աշխատանքների կատարման համար և կապահովի նախատեսված աշխատանքների պատշաճ և ժամանակին իրականացումը:

Այսպիսով, գնահատման և համապատասխանության տեսանկյունից խնդրում ենք առաջնորդվել ոչ թե աշխատանքային նախագծում առանձին ներկայացված տեխնիկայի ցանկով, այլ կից նախահաշվային հաշվարկներում ներառված մեքենաների և մեխանիզմների տեսակներով, որոնց համար հաշվարկված են համապատասխան ծախսերը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՔՀ-ԳՀԱՇՁԲ-26/03 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ. Խաչատրյանին:
Հեռախոս՝ (374)94-357-087:
Էլեկտրանային փոստ՝ kajaranfinance@gmail.com